թեան գրոյս, զի շատ արտասուելով և հառաչանաք գրեցի զայս. զի այսմ ժամանակի փախստական էինք ի հայրենի տեղեաց Եաղլովցայու ի Շէլոմն քաղաք, ի ձեռաց չար Խմէլին. զի շատ աւերում տրար ի Լեհաց երկիրն։ Յայսմ ժամանակի եկաւ Տէր մահտէսի Գասպարն Երուսաղեմայ, զի ուխտն կատարեալ էր. եկաւ ի Շէլով քաղաք. յետոյ չկարաց երթալ ի Եաղլովցա, զի շատ խառնակութիւն էր. ամէն հարամի եղեր էր. որ իսկի չէին թողեր որ մարդ գալէր ճամբահներն. զի այս չարութեանս է պատճառ Խմէլին. յետոյ ետուր իւրեան հալալ ընչիցն՝ ինձ անարժան մեղաւոր Մուրատ սարկաւագիս, որ զայս սակաւ կանոնահրամանն գրեցի. այլ բաւ է։ Աղաչեմ զձեզ ով հայրք և եղբայրք, հայրապետք և վարդապետք, քահանայք և սարկաւագք, յորժամ կարդաք կանոնահրամանս կամ օրինակէք, յիշեցէք զանարժան ծառայն ձեր Մուրատ սարկաւագ զգծող սորին, և զնծողն իմ, զխոճայ Միքայէլն՝ որ առ Աստուած փոխեցաւ, և զմայրն իմ Եաղութ խաթունն. յիշեցէք միով Հայրմերիւ, և Աստուած զձեզ յիշէ միւսանգամ գալստեանն. ամէն։ — Ո՛հ գիր՝ որ մնաս. ո՛հ ձեռք որ հողանաս. ո՛հ եղբայր որ թէ զմեզ չմոռանաս։ [Կանոնագիրք. ի Ս. Ղազար]։

1652.

Ի թուականիս մերում ՌՃ (1651–2) ամին ելեալ ի Ս. Էջմիածնայ՝ բարձրափառ և ամենահռչակ Տէր Փիլիպպոս կաթողիկոսն, հանդերձ 12 վարդապետօք, չոգաւ յԵրուսաղէմ, առ որ և զամենաթշուառս (Յովհաննէս Վ.) կրսերս ի բեմբասացս և հուսկ վերջոտնեալս ի ծնունդս եկեղեցւոյ, ունելով ընդ իւր. որոյ այս 25 ամ է զի ծառայեցի նմա մտերմաբար. և գնացեալ մինչեւ ի քաղաքն Էնկիւրեայ, և անտի յղեալ զմեզ ի Բիւզանդիոյ՝ սակս զնոսին հրաւիրելոյ ի Ս. Երուսաղէմ... Եւ արդ գնացեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ընդ վերոյ գրեալ Տեառն մերոյ, և անտի եւս դարձաք ի յարքայական քաղաքն ի Կ. Պոլիս. և անդէն զմեզ ուղարկեաց Իլխաց աշխարհն՝ հայրն մեր, ինքն չոգաւ ի յաթոռ իւր ի Ս. Էջմիածին, նոյն միաբանօքն։ Իսկ իմ երթեալ յայս վերոյասացեալ երկիրն, իբրեւ կատարեցաք զգործս մեր, յետ երկուց ամաց դարձաք ի Ս. Էջմիածին։... [Աշետարան ի Մոշ]։

1654.

Գրեցաւ Ատենագիրքս ի յաշխարհս Իլխաց ի քաղաքն Կամէնից, ի դառն և ի տրտում ժամանակիս, ի վշտալից և ի թշուառական ատենիս, և ի նեղաց սրտիս և ի այրեալ լերդիս, պիղծ և անօրէն Հոռոմ ազգէն, անուամբ կոչեցեալ չՊօկտան Խմէլէնիցքէն, որ երկու ամ պաշարեալ և գերեալ զաշխարհս Իլխաց, զքաղաքս, զգիւղս, զգաւառս, զգիւղաքաղաքս, զժամս, զժամատեղս, զքահանայս և զկարդացողս, զկենդանիս և զմեռեալս, զամենայն զինչ ի միտս անկանէր և ի ձեռն հասանէր, նա անխնայաբար և անողորմաբար տանջեալ գերեալ և տայր ի ձեռս այլազգեաց, որ կոչուէին Թա-